ՆԱԽԱԳԻԾ 44

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2012 թվականի -ի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆԸ «ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ» ԾՐԱԳՐՈՎ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԻՑ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N168-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության 2012թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 03 բաժնի 04 խմբի 01 դասի 02 ծրագրի շրջանակներում Արարատի մարզի դատախազության Վեդիի նստավայրի շենքի հիմնանորոգման համար անհրաժեշտ աշխատանքների ձեռքբերումն իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված բանակցային ընթացակարգով առանց հայտարարության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. Դանիելյան

Տեղեկանք-հիմնավորում

Արարատի մարզի դատախազության Վեդիի նստավայրի շենքը գտնվում է անմխիթար վիճակում, որը խոչընդոտում է դատախազների բնականոն աշխատանքը: Գարնան ձնհալի հետևանքով առաստաղներից ջրերը թափվել են աշխատասենյակ, որն առաջացրել է անբարենպաստ աշխատանքային պայմաններ:

Շենքի պատերում կան ուղղաձիգ և թեք միջանցիկ բազմաթիվ ճաքեր, որոնք ունեն նստվածքային բնույթ: Հատակները գտնվում են անբավարար վիճակում, շենքում տեղի են ունեցել նստվածքային բնույթի ուժեղ դեֆորմացիաներ:

Կարիք է առաջացել իրականացնել անհետաձգելի վերանորոգման աշխատանքներ:

Աշխատանքները նախընտրում ենք կատարել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով՝ բանակցային ընթացակարգով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու (ԲԸԱՀ), քանի որ ծագել է գնման անհետաձգելի պահանջ, և գնման այլ ընթացակարգի կիրարումը ժամկետի առումով անհնար է:

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Սեյսմիկ պաշտպանության արևմտյան

ծառայություն ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն

_____ Ա. Ջավադյան

"01" 12 2011թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արարատի մարզի, Վեդի քաղաքի, Արարատյան փողոցի թիվ 53/2 հասցեում գտնվող՝ ՀՀ դատախազությանը պատկանող շենքի տեխնիկական վիճակի ու սեյսմիկ խոցելիության գնահատման և շենքում վերանորոգման աշխատանքներ իրականացնելու հնարավորության վերաբերյալ

Սույն եզրակացությունը տրվում է ի պատասխան ՀՀ Արարատի մարզի դատախազ Ս. Վ. Մնացականյանի թիվ 59-36/1-11 առ 29.11.2011թ. նամակի: Եզրակացություն տալու նպատակով «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն» («ՍՊԱրմԾ») ՊՈԱԿ-ի կողմից (Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության Պետ. լիցենզիա թիվ 13515 տրված 06.10.2009թ.) կատարվել է ՀՀ Արարատի մարզի, Վեդի քաղաքի, Արարատյան փողոցի թիվ 53/2 հասցեում գտնվող՝ ՀՀ դատախազությանը պատկանող շենքի ակնադիտական հետազննություն, չափագրման և լուսանկարման աշխատանքներ:

Շենքի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումները.

ՀՀ Արարատի մարզի, Վեդի քաղաքի, Արարատյան փողոցի թիվ 53/2 հասցեում գտնվող՝ ՀՀ դատախազությանը պատկանող շենքը, որը գրանցված է անշարժ գույքի սեփականության իրավունքի առ 15.04.2005թ. թիվ 1794833 վկայականում, երկու հարկանի, 13.2x22.0մ արտաքին եզրաչափերի ուղղանկյունաձև հատակագծով, հասարակական նշանակության շենք է (տես նկ. 1): Այն կառուցվել է 1960-ական